

սամին և քուերց իմոց Աննային և Դեղ-
ժուհին և ամենայն արեան մեթաւորաց
իմոց. Աստուած ողորմի ասացէք անար-
ժան Մեարուպիս որ ծաղկեցի գեղեցիկ դե-
ղով ոսկով և լազուարդով և ազգի ազգի
գունով յիշատակ բարի »:

Յիշատակարան Երկրորդ. « Դարձեալ
յիշեցէք ի Քրիստոս, Աստուած ողորմի ա-
սացէք տէր Յոհաննէսին, իւր զուտոր Սօ-
վինին, ի նորապսակ Արն Սովինի Մանու-
կին, որ առ Աստուած փոխեցաւ ի հան-
գիստ արքայութեանն իւր անգրաւ յաւիտե-
անն ի փառս՝ ի Պաղտատ, ամի Տեառն 1631
Մարտի 23ին: Յիշատակս տվաւ սուրբ
աւետ(ար)անս ի երկիրն Ղարայղան՝ ի
գիւղն Չանախչի ի նորաշէն սուրբ ամե-
նափրկչին ի ձեռամբն անարժան և քա-
հանայ տէր Յոհաննէսին Համարաձումեան.
վասն որոյ երես անկեալ աղաչեմ զձեզ
զի լիայսրտիւ և բոլոր հաւատքով կար-
դալով հանդիպելով յիշեցէք տէր Յոհան-
նէս և զնորափեսայն իւր Մանուկ մահ-
տէսի Ընաֆէլեան ևս ամուսին իւր Սովին
հայր մեր և ողորմի ասացէք և յիշեցէ(ք)
և դուք յիշեալ լինջիք առաջի Քրիստոսի
Աստուծոյ մերոյ ամէն »:

Ս. ՏԵՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

1. Ղայրաղան կամ Ղարաղան կազմէ Պարսկաստա-
նի ենթազատաւոց մին, ի մէջ Ղում և Համաղան քա-
ղաքաց:

ՀՍԿԱՅ ՕԳՈՆԱԻ ՄԸ

Ամերիկայի մէջ սկսած են շինել հսկայ օդա-
նաւ մը՝ մէջը պարտէզով: Օդանաւը որ 1600
ձիու զօրութեամբ երկու շարժիչ մեքենաներով
պիտի ըլլայ՝ բաց ի ամէն տեսակ դիւրութիւն-
ներէ՝ պիտի ունենայ իւր բարձրագոյն մասին մէջ
հարիւր մեղրի երկայնութեամբ սարահարթ հո-
ղաբլուր մը. սա ծածկուած պիտի ըլլայ տուն-
կերով ու ծաղիկներով: Օդային դաշտը հաղոր-
դակցութեան մէջ պիտի դրուի ուղեւորներու յար-
կաբաժինին հետ՝ ելքարարկան վերելեակով մը
(ascensore):

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

ԳՐԻԳՈՐԻ ՆԻՒՍԱՅԻՈՑ

ԶԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՑՆ

(Շար. տես Բազմ. էջ 104)

ԵՐԿՐՈՐԳ ՕՐԻՆԱԿԸ, որ առաջինին պէս
ամբողջ է՝ տեղեկ կազմով ու քայքայուած
ձեռագիր մ'է. կը կրէ (56 Ա. Դ.) թուա-
համարը, ունի 20 հր.մեղր երկայնու-
թիւն, 15 հր.մեղր լայնութիւն, և Յ, 5
հր.մեղր թանձրութիւն: Առաջին մասը՝
այսինքն Գր. Նիւսացիի գործին թարգ-
մանութիւնը կը բաղկանայ 225 էջէ, իսկ
երկրորդ մասը՝ Բարսղի թարգմանութիւնը՝
նոր իշագրութեամբ 237 էջէ, որով ձե-
ռագիրը ընդ ամէնը կը պարունակէ 462
էջ գրութիւն, ունենալով 231 թերթ:

Թուղթը բամբակեայ է. գիրը ԲՈՂՈՐ,
բարեխախտաբար գեղեցիկ և ընթեռնի:

Ունի երեք Յիշատակարան, որոնց մէկը
կը վերաբերի թարգմանութեան ժամանա-
կին, և յար և նման է Առաջին Որինա-
կին ունեցածին, միայն թէ այս ձեռագրին
մէջ կը գտնուի Բարսղի երկին վախճանը,
վերջն ալ յաւելուածով մը, որ է.

« Ընդ նստին և գլետնեայս ի քոյր քա-
« ղեաց գործառնորսեանց գտրին զծոյ գլա-
« սի ի որ յազում ամօք ծառայեցի զրոյն և
« ի յոգին ոչ ժամանեցի. աղաչեմ յիշել ի
« տեք ո՛ր քարեմիտ պատահողք սմին, ևս
« և զաշակերտն իմ զԳրիգորն և որ առատն
« է յամենայնի, յիշողացդ և յիշեցերցս ու
« զորմեցի... և այլն »:

Յիշուած Բասիլը Բարսղ Նիւսացին է
և Գրիգորն » ալ՝ անոր եղբայրը՝ Գր.
Նիւսացին:

*

Միւս երկու Յիշատակարանները Գրը-
շութեան կը վերաբերին. առաջինը կը

գտնուի Գրիգորի երկին վերջը, երկրորդն ալ Հատորին վախճանը:

Առաջինը հետեւեալն է.

« Փառք ամենասուրբ երրորդութեան հօր
« և որդոյ և հոգոյն սրբոյ... որ ետ կա-
« րողաբան տարտամ անհին և տնաւ
« գրչիս հասանել ի վերջին գիծ տառիս որ
« կոչի գիրք թնութեան մարդոյ, գրիգորի
« եպիսկոպոսի Նիսասցոյ տապեայ. ի վայե-
« լումն սրբազան հեղ և հեղահողի Տէր Զա-
« րարիայի որդոյ, Պարոն Տէր Գասար
« ամագերեցի: Արդ հեղ գրաս գրչութեան
« սգաս ի րժ Հայկազան Տոմարի ԻՒՒ որե-
« ղանի և ԺԲ Բիւ աւելի, յամենան Մարտի
« ԺԷ երրորդի, օրն Դ շաբաթի: Չնամբ խաչ-
« քոյի մականուամբ տօմածիրքի, յերկիրս
« Իրախայ ի քաղաքն Լով, առ դրան ննջման
« սուրբ աստուածո՞նքն, ի քաղաւորութեան
« Երրորդ Չիկմունտին, և ի կարողիկոսու-
« Բեան Տեառն Տէր Մեղրիսեղիկին: Արդ ա-
« ղաչեմ զամենեւեան որք հանդիպիլ սրմա
« կարդալով կամ օրինակելով և կամ տե-
« անակով. զանշորն կշեցիք և զցական-
« սուրին լըցիք և անարնասութեան գրիս
« և սրբալուսեաց անմեղադիր յիւրոք, զի
« կար մեր այս էր և այսչափ գրեցաւ. այլ
« և յիշեցի զվաթապետն իմ զտէր Դաւիթ
« քահանայն և զծնողս իմ և զամենայն ա-
« ղեան մերձաւորս իմ յիշեցիք... և այլն »:

*

Սոյն Յիշատակարանէն կ'ուսանինք՝ թէ
ձեռագրին ընդօրինակութիւնը աւարտած
է Հայոց 21 × 50 ÷ 18 = 1068ին, (որ
է Քրիստոսի 1619 թիւը), և անոր սկզբ-
բնաւորութիւնն ալ եղած ըլլալու է՝ ամե-
նայն հաւանականութեամբ՝ նախորդ տա-
րին, ինչպէս կարելի է հետեւեցնել երկրորդ
Յիշատակարանէն, որ կը կարդացուի ա-
մենավերջին թերթին վրայ՝ այսպէս,

« Շնորհիւ Տեառն սկսայ, և ողորմութեամբ
« նորին յանկ հանեալ տարտի, զգիրք որ
« կոչի մարդակազմութիւն. ի խնդրոյ սրբ-
« քազան և ուսումնասէր Տէր Զաքարիայ
« քահանայի: Բայց գրեցաւ սա, ձեռամբ
« փցուն և անխնաստ գրչիս Գրիգորի, մակ-

« անուամբ Տօմածիրքի: Ի քվարերու-
« Բեան Հայոց Ռիլէ, Ինիստեմերի ամսոյ
« ԺԼին:

« Արդ որք հանդիպիլ այսմ տարի,
« Եւ այսաք հայիք այսմ գրածի,
« Ասացեք աստուած որդրմի
« Գրիգորի այսմ զծօղի »:
« Եւ զյիշողըք քրիստոս յիշէ, յիսր միւս-
« անգամ զարտեմենք »:

*

Դժուար չէ ըսել, թէ Տօմածիրքի երկու
անուն ունի եղեր, թաշգոյ և Գրիգոր, և
թէ Նիսասցիներուն թարգմանութեան ընդ-
օրինակութիւնն սկսած է նա 1618 Ինի-
տեմեր 18ին և աւարտած յաջորդ տա-
րի, 1619 Մարտ 17ին:

*

ԵՐՐՈՐԻ ՕՐԻՆԱԿԸ ամենընտիր և ամ-
բողջական է. կը կրէ 1241 Ե. Գ.
Թուահամարը. սքանչելի կերպով կազ-
մուած է և ամփոփուած՝ կաշէպատ տախ-
տակիայ կողքերու մէջ:

Մեծութիւնն է 13 հր.մեղր. լայնու-
թիւնը 12, 5 հր.մեղր. իսկ թանձրու-
թիւնը 4 հր.մեղր:

Սա ալ սկիզբը և վերջն ունի մագա-
ղաթեայ երկերկու թերթ խոշոր երկու-
թագիր գրերով, որոնք աւետարանի մա-
սեր են:

Կը բաղկանայ 235 թերթէ. թուղթը
հաստ բամբակեայ է, և ունի 470 էջ
գրութիւն բոլորագիր. այնչափ սիրուն ու
գեղեցիկ՝ որ տպագրուածէ տարբերութիւն
չունի: Եւ այս ձեռագիրը միաներուն վրայ
առաւելութիւն մ'ալ ունի, այն է՝ նիւթե-
լու ճուցակը, որ ուրիշներու մէջ կը պակսի,
և նաև Գրիգոր Նիսասցիի « Յաղագս ու-
սումն մանկանց » աշխատութիւնը, զոր
հարկաւ դարձեալ Ստ. Սինեցին պէտք է
թարգմանած ըլլայ:

*

Թարգմանութեան ժամանակը յայտնող
Յիշատակարանը չկայ այս Զեռագրին մէջ:

բայց է՛ն վերջը ունի ընդօրինակութեան մասին մին կարճ՝ միւսը երկար յիշատակութիւն մը. կ'ըսէ

Առաջինը՝

« Գրեցաւ ի բռնին Հայոց ՌՃ և Է ա՝ մի ձեռամբ անտրժամ և անխմատ Այրաւ՝ համ մեղաւոր գրչի. ախ վայե ինձ :

Երկրորդը՝

« Յամի հազարերորդի հարիւրորդի և հինգերորդի քառակոտնութեան հայոց, ես անկրկար և ամենավարան բռնման ի գոյր և զաւսակ և ի գեղչէն Վանատայ, տնտեսը և լոկով ընկալեալ զբանասիրացն յորտրո՝ մուսն, այլ ի համախոտը բերացից նո՝ ցին բազմագան տարբերութեամբ տարա՝ կացնայ... :

« Որովք մտապէս հարեալ ի խղճե՛, ոչ տուռ ի սփոխման աղետից իմոց, ուստի և ստացայ զնամեղարան մանուածս, հոգեկիր և երբանքնին առն աստուծոյ Գրիգորի Նիա՝ սացոյն, զյարագս բնութեան և կարմոս՝ բեան մարդոյս և վասն կոտորեանս ես... :

« Էս արդ ցառաղին անձամբ և խոնառոտ տեսարանօք, աղաչեմ զհամայն տեսօրոյ և այս մատենի, յիշման առնել արժանի, զամենապատիկ իոյնդատեալս ի յոգի զԹոս՝ մա բանի սպասաւորս... Էսս և մարդեմ յիշակել զիմն, որ քն ըստ մարմնոյ ս՝ բնանաւորք զհայրն իմ զնորիչան հան՝ դերձ մարք, և զեղարան զնարագատ գորի՝ գոր, զարիտակեա, և զյակոր, և զորդի լեղօր իմոյ զսիւնն դեռաբոյն, նաև զբոյրն և մեր զկրտսեր զանկին և զայլ ամենայն արեան մերձաւորսն իմ, զկենդանիս և զանգոնցեալս ի բրիստոս :

« Էս որ առատն և ի տուրս բարեաց, և տացե զանպատ բարիսն յիշողացդ և յի՝ շեցեյցս, զաստիս և զհանդերձիւոյն, յո՝ բոսմ վառք և երկրպագութիւն, յամենայն ճղանակաց գոյից, անկրտս յաւիտեանս և ամեն » :

*

Այսչափ գրութենէն սա յայտնի կ'ըլլայ մեզ, թէ ձեռագիրս ընդօրինակած է հայոց 1105 թուին (Փրիստոսի 1656)

ԱՌՐԱՀԱՄ անուն գրիչ մը, և զրել տուողն է՝ Գողթն գաւառի Վանատի զիւղէն Թու՝ մա վարդապետ մը, որ կ'երեւի բաւական նեղութիւններու ենթակայ եղած է մինչև վերջանալ այս ընդօրինակութեան՝ որ ա՝ մնէն գեղեցիկ ընտիրը և ամբողջականն է :

*

ՁՈՐՐՈՐ ՕՐԻՆԱԿԸ նախորդներուն չափ գեղեցիկ չէ, և նոր ժամանակի ընդօրինակութիւն է. ունի 22 հր.մեղր լայնութիւն, և 2. հր.մեղր թանձրութիւն, և կը կրէ՝ (294 Գ. Բ.) թուահամարը :

Կը բաղկանայ 324 էջ գրութենէ և 162 թերթէ. թուղթը սովորական, գիրը նոսր՝ ընթեռնի :

Ունի Գրիգոր Նիսացիի երկու աշխատութիւններն ամբողջութեամբ, բայց առանց թարգմանութեան ժամանակը յայտնող Յիշատակարանին : Զեռագրիս էն վերջը գրուած է ընդօրինակութեան թուականին յիշատակութիւնը՝ որ է .

« Գրեցաւ գիրքս ձեռամբ Անրեպցի

« Ովանէսի որդի, Գեորգ վարդապետին.

« Ի Պարայ օրինակեալ ի գրքին

« Գեորգ վարդապետին յառաջնորդէ

« Ճիւղոս (Զուդա) քաղաքին :

« յամի տեան 1753 Յօգոստոսի վերջն :

*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՕՐԻՆԱԿԸ, որ (1129 Ձ. Գ.) թուահամարն ունի՝ կաշեկազմ հաստ կողքերով հաստը մ'է. 12 հր.մեղր լայնութեամբ, 16,5 հր.մեղր մեծութեամբ, և 4 հր.մեղր թանձրութեամբ :

Ունի թարգմանութեան ժամանակի Յիշատակարանը յար և նման Ա. և Բ. օրինակներուն ունեցածին. բայց չունի իր մասնաւոր Յիշատակարանը. կ'երեւի թէ կը գտնուէր այն վերջի թերթին վրայ, որուն համար գրուած է թէ կը պակսի :

334 էջ գրութիւն է, ազեղ բոլորագիր. կը բաղկանայ 167 թերթէ. թուղթը հաստ ամբաղեայ է բաւական հին, ուրկէ դաւելի է թէ գրուած ըլլայ այն ԺՁ - ԺԷ, դարու մէջ :

Հատորին առաջին կողքին մէջի կողմը կը կարդանք, թէ այս ձեռագիրը՝

« Յիշատակ է Շառոբեցի Պարոն Ռա-
« փայեյին, զոր երևի ի վարատիւնս եղ-
« բայր եղրս Հ. Սոսրիս վարպետն.
« Յամի տեսնեմ, 1781, ի յունի. Յ:

*

ՎԵՅԵՐՈՐԻ ՕՐԻՆԱԿԸ որ (40 է. Զ.)
Թուահամարով տղեղ ձեռագիր մ'է, ընդ-
օրինակութիւնն է վերոյիշեալ առաջին
օրինակին, որուն Յիշատակարանն ալ
ամբողջութեամբ դրուած է վերջը:

Յայտնի չէ թէ ո՞վ եղած է ասոր
գրողը որ հաւանաբար նորագոյն ժամա-
նակի կը պատկանէր, զի գրին ձեռ այն-
պէս ցոյց կու տայ: 31 հր. մեղր երկայնու-
թիւն, 20 հր. մեղր լայնութիւն, 1, 5 հր.
մեղր թանձրութիւն ունի այն. Թուղթը
սովորական է. ունի 133 էջ գրութիւն
և 70 թերթ:

Ակիջքը գրուած է թէ՛ այն յիշատակ
է Գագեգեան ընտանեաց, որ ի Զմիւնեայ
կեկայ:

*

Հակառակ որ առաջին Զեռագրէն ընդ-
օրինակութիւնն է՝ գրողը համարժեակած է
փոփոխութիւններ ու գլուխներու տեղա-
փոխութիւններ ընել մէջը, և աւելորդ ըլ-
լալով ալ՝ Գրիգորի թէ՛ առաջին և թէ՛
երկրորդ աշխատութիւններուն վերջը ա-
ռանձին առանձին դրած նիւթերու ամբող-
ջական ցանկը, զոր միայն երրորդ օրի-
նակն ունէր, այն ալ կրսովի:

*

Այս վեց հատն են աւասիկ Նիսացոյն
թարգմանութեան անթերի օրինակները,
որոնք Թուականի կարգաւ կը դասաւո-
րուին՝ առաջինը 1318 ին, երկրորդը,
1618 ին, երրորդը՝ 1656 ին, Զորորդը՝
1753 ? ին, Հինգերորդը 1781 ին ? իսկ
Վեցերորդը՝ ասոնցմէ յետոյ:

Երկու աշխատութիւն կը պարունակեն
ասոնք, երկուքն ալ Ստ. Սինեցիէն թարգ-

մանուած, նախ՝ Գրիգոր Նիսացիին Յա-
ղագս թնոյթեան մարդոյ երկը, և յետոյ
անոր Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն
աշխատութիւնը:

Ռաջինը կը բազկանայ ԽԲ (42) Գլուխ-
ներէ, իսկ երկրորդը՝ ԼԲ (32):

Առաջինին նիւթերը հետեւեալներն են.
Ա. Յաղագս մարդոյ: — Բ. վասն անձին,
այսինքն հոգոյ և մարմնոյ: — Գ. վասն մի-
տարութեան հոգոյ և մարմնոյ: — Դ. Յա-
ղագս մարմնոյ: — Ե. Յաղագս տարերց: —
Զ. Յաղագս տեսողականին: — Է. Երեսաց:
Ը. — Ծօշափնեաց: — Թ. Ճաշակեմեաց —
Ժ. Լսեմեաց: — ԺԱ. Հոտոտեմեաց: — ԺԲ.
վասն խմացողականին: — ԺԳ. Յիշողակա-
նին: — ԺԴ. վասն Ներարտամարդեցոյ և
յառաջ յերեցեկոյ բանի: — ԺԵ. վասն ան-
բանի մասի անձին: — ԺԶ. վասն ցանկա-
կանին: — ԺԷ. Հեշտութեան: — ԺԸ. Տրտու-
մութեան: — ԺԹ. Սրտամտութեան: — Ի. Եր-
կեղի: — ԻԱ. վասն անբանին և հնազանդի
բանին: — ԻԲ. վասն կերակրականին: —
ԻԳ. վասն շէնքական: — ԻԴ. վասն ծը-
նընդականի և սերմնականի: — ԻԵ. Տարտու-
շումը գորտքեանց կենդանոյն: — ԻԶ. Յա-
ղագս ըստ յարձակման կամ յօժարութեան
հարկաւոր ցանկականին: — ԻԷ. Յաղագս շէնք:
— ԻԸ. կամատրի և ակամայի: — ԻԹ. Ա-
կամայի: — Լ. Անգիտութեան և վասն Ակա-
մայի: — ԼԱ. կամատրի: — ԼԲ. վասն նա-
խաժարութեան: — ԼԳ. Յաղագս որոց
խորհրմքն: — ԼԴ. Ճակատագրի: — ԼԵ.
Յաղագս ի ձեռն աստուղաց և ձակատագրի:
— ԼԶ. Յաղագս յօժարութեան գործոց ի մեզ:
— ԼԷ. Զիսքի ասէ Պրատոն զանկատագրին:
— ԼԸ. Յաղագս Անձնի: յաւանականին: —
ԼԹ. Թե՛ ևն ինչ որոց ի մեզ է ասեմին: —
Խ. Թե՛ վասն է՞ր եղաք անձնի: յաւանք: —
ԽԱ. վասն նախախնամութեան: — ԽԲ. Թե՛
ոչ և նախախնամութեան:

*

Ինչպէս կը տեսնենք սոյն Յուցակէն՝
Գր. Նիսացի մարդկային մարմինը գրե-
թէ ամբողջ բնագննութիւնը նիւթ կ'առնէ
իրեն, և թէ՛ ևն իր բոլոր զրաձնեքը կցուած

են աստուածաբանական տեսութիւններու վրայ՝ սակայն կը պարունակեն բնագնահատական և մարդակազմական այնպիսի դասեր՝ որոնք հետագայ ժամանակներու թշուառութեան հիմ ծառայած են:

Կալիֆօնիոյ յետոյ ապրած է Նիւսացին, և այսպէս՝ Թերևս ազդուած իսկ է աշուր երևելի աշխատութիւններէն: Մեր Հայ թշուառաններուն մէջ շատ ու շատ փոխառութիւններ կան Նիւսացիէն. սաղմնառութեան և զգայարաններու վրայ շարադրած մասերը գրեթէ նոյնութեամբ կը գտնուին, և ասոնց հետ նաև Նիւսացիէ վերջը հեղինակուած մարդակազմութիւններէ փոխառութիւններ:

*

Երկար կ'ըլլար այս բոլորին մանրամասն բաղդատութիւնն ընել հոս, որովհետև հարկ կ'ըլլայ Նիւսացիին գործը վերլուծել ծայր ի ծայր. բան մը՝ որ կը պահանջէ մասնաւոր աշխատութիւն:

ՏԻՐԹ. ՎԱՐԱՍ Զ. ԹՈՐՈՒՄԵԱՆ

Վեներաբլ — Ս. Ղազար

13 Դեկտեմբեր 1923

(Շարունակելի)

Պայրըն կը զրէ թէ լոռութեան ու մահուան պարտէզներուն մէջ կը հանդարտի հոգին, վասն զի մահն իսկ կը թեթևցնէ ըզմեզ մեր կեանքի մէկ մասէն, այն է՝ մեր ամենօրեայ նախահոգութիւններէն, որոնք խիստ կը ծանրանան մեր ուսերուն վրայ: Կեանքի գազանիքը, կ'ըսէ, պէտք է կեանքի համար մեռնիլը և միայն հոգւոյ համար ապրիլն ըլլայ. պէտք է բոց մ'ըլլալ որ վառի առանց մեռնողի, վառող մը՝ որ բուրբ առանց թերթերու, ձայն մը՝ որ երգէ առանց բերնի, սիրտ մը՝ որ սիրէ առանց արօփելու կուրծքին մէջ:

Գ Ր Ա Կ Ա Ն

Յ Ա Ր Ա Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

“ՀԱՌԱՏՈՎ, ԽՈՍՏՈՎ,ԱՆԻՄ” ,,

Ա Ղ Օ Թ Ի Թ

Ս. ՆԵՐՍԵՍԻ ՇՆՈՐՀԱԼՈՑ

(Շար. տես Բազմավէպ էջ 119)

ԺԳ.

Ո՛վ դու արքայ երկնային,
Արքայութեանը փառքին՝
Ջոր խոստացար տալ ըզբեզ
Պաշտողներուն սիրակէզ՝
Ջիս ալ ըրէ արծանի.
Ջորացուր սիրտս՝ ատելի
Մեղքէն զըզուիլ, և անգին
Սիրոյդ ըղձալ կաթոգին,
Ապրիլ, գործել մի միայն
Քու սուրբ կամքիդ համաձայն.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս:

ԺԴ.

Ո՛վ Տէր, խնամող բարեգութ
Ամէն ստեղծած բաներուդ,
Հոգիս, մարմինս ապահով
Ըրէ խաչիդ նըշանով,
Խաբէպատիր ակնախիտ
Հրապոյրներէ մեղսառիթ,
Դիւին լարած հաղբերէն,
Մարգիկներէ անօրէն,
Հոգւոյ, մարմնոյ բիր հազար
Վըտանգներէ փաստակար.
Արարածներուդ ողորմութեան յոյս,
Ողորմէ՛ և իմ բազմամեղ հոգւոյս:

ԺԵ.

Քրիստոս Աստուած պահապան
Ամէն իրի ստեղծական,
Ձեզ սուրբ աջդ ահաւոր
Վրաս հովանի մըլտագոր.
Յր ու գիշեր անդադար